ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

Նիստի անցկացման՝
-վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 15 օգոստոսի 2019թ.
-ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Առուշանյանը, Գ. Մեհրաբյանը, Հ. Ռամազյանը, Ա. Գևորգյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. Բաց մրցույթի հրավերում փոփոխություն կատարելու մասին
(Ա. Խաչիկյան)

1.1 Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման 14.08.2019 թվականի հ. 45/15869 գրությունը, համաձայն որի «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/19» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կատարել համապատասխան փոփոխություններ, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, որոշեց հրավերում կատարել համապատասխան փոփոխություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Գնման առարկայի փոփոխված տեխնիկական բնութագիրը.

Ծավալը	1,0 – 1,1 մ^3
Երկարությունը մմ	1375 +/- 2%
Խորությունը, մմ	1075 +/-2%
Բարձրությունը, մմ	1360 +/-2%
Քաշը, կգ	50-60
Բեռնատարողությունը, կգ	ոչ պակաս 440
Գույնը	մուգ կանաչ
Անիվների տրամագիծը՝	200մմ
Կոնտեյների նկարագրությունը	

Նյութը՝ բարձր խտայնության պոլիէթիլեն, համաձայն EN 840 միջազգային ստանդարտի: Աղբարկղը տեղակայված է շարժական 4 անիվների վրա, որոնք ամրացված են կոնտեյների կաղապարի հետ մետաղական կոնստրուկցիայի միջոցով: Անիվների նյութը նույնպես պետք է լինեն բարձր խտայնության պոլիէթիլենից, սև գույնի, իսկ անվադողերի նյութը՝ ռետինե, բարձր խտայնության-200 մմ տրամագծով: Անվադողերը պետք է ունենան փոխարինման հնարավորություն: Անիվներից 2-ը պետք է ունենան արգելակման համակարգ: Անիվները պտտվում են ուղղաձիգ առանցքի շուրջ: Աղբարկղը պետք է լինի կայուն ուլտրա-մանուշակագույն ճառագայթների, ցրտի և տաքի նկատմամբ: Վերևի մասում ունի ոչ պակաս երկու ծխնիների միջոցով բացվող կափարիչ, իսկ կողքերի մասում աղբատար մեքենայի միջոցով բարձրացման և բեռնաթափման հնարավորություն, որոնք ամրացված են կաղապարին մետաղական կոնստրուկցիայի միջոցով: Աղբարկղի աջ և ձախ կողմերում պետք է լինեն երուական բռնակներ:

Աղբարկղերը պետք է ունենան համարակալում, որը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ և ծխախոտը աղբարկղ գցելն արգելող զգուշացում:

Անձնագիր, EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներ:

Բեռնման եղանակը

Հետևից բեռնաթափմամբ աղբատարների համար

Երաշխիքային ժամկետ

Կենցաղային թափոնների կոնտեյների՝ ներառյալ բաղադրիչների համար ոչ պակաս քան մեկ տարի:

Առաջարկվող կոնտեյների նմուշը համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

- **Ապրանքը պետք է համապատասխանի որակի նկատմամբ պահանջներին, որոնք սահմանվում են տեխնիկական կանոնակարգով, ստանդարտացման ոլորտում փաստաթղթերին,**
- **պետական ստանդարտներին, որոնք կիրառվում են այդպիսի ապրանքների համար:**
- **Ապրանքը պետք է մինչ այդ շահագործման մեջ եղած չլինի Մատակարարի և (կամ) երրորդ անձանց մոտ, մինչ այդ ենթարկված չլինի վերանորոգման, նորացման կամ վերականգնման, չպետք է գտնվի գրավի, արգելանքի կամ այլ ծանրաբեռնության տակ:**
- **Ապրանքի վրա չպետք է լինեն մեխանիկական վնասվածքների հետքեր, ինչպես նաև մատակարարվող Ապրանքի պաշտոնական նկարագրությանն այլ անհամապատասխանություններ:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ա. Խաչիկյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
2. Բաց մրցույթի հրավերի փոփոխված տեքստը հաստատելու մասին.
3. Բաց մրցույթի հայտարարության փոփոխված տեքստը հաստատելու մասին.
4. Բաց մրցույթի հայտարարության և հրավերի ռուսերեն լեզվով տեքստը հաստատելու մասին.
5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

3. Բաց մրցույթի փոփոխված (հայերենով) և ռուսերենով հրավերների տեքստերը հաստատելու մասին

(Ա. Խաչիկյան)

Հանձնաժողովը որոշեց՝ հաստատել փոփոխված (հայերենով) և ռուսերենով հրավերների տեքստերը

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

4. Բաց մրցույթի փոփոխված (հայերենով) և ռուսերենով հայտարարությունների տեքստերը հաստատելու մասին

(Ա. Խաչիկյան)

Հանձնաժողովը որոշեց՝ հաստատել փոփոխված (հայերենով) և ռուսերենով հայտարարությունների տեքստերը

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

5. Բաց մրցույթի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Խաչիկյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հայտերի բացման նպատակով հանձնաժողովի նիստ հարավիրել հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված 41-րդ օրը՝ սեպտեմբերի 25-ին, ժամը 11:00-ին, ք. Երևան, Արգիշտի փողոց 1 հասցեում՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի 321 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Խաչիկյան
Անդամներ՝		Վ. Առուշանյան
		Գ. Մեհրաբյան
		Հ. Ռամազյան
		Ա. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան